ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 51

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

31-ը մարտի 2021թ.

Նիստին ներկա էր գիտական խորհրդի 35 անդամներից 27-ը:

Նիստը վարում էր գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը, նիստի քարտուղարն էր Մ. Ս. Աթոյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. ԵՊՀ ԻՄ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը հաստատելու մասին:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Հ. Մակարյան)**
2. 2021-2022 ուստարվա ԵՊՀ ԻՄ ուսման վարձավճարների չափերի հաստատում: (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Հ. Մակարյան)**
3. ԵՊՀ ԻՄ ԳԱՑ-ի /2015-2020թթ/ վերաբերյալ հաղորդում:
   (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ա. Ճաղարյան)**
4. ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին: (Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ա. Ճաղարյան)**
5. Հաղորդում ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման ընթացքի մասին(2019-2020 ուստարի):

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի վարիչ **Ն. Գրիգորյան)**

6. Ընթացիկ հարցեր

6.1. ԵՊՀ ԻՄ-ում հայտարարված ներմասնաճյուղային դրամաշնորհային մրցույթի ընթացքի մասին։

(Զեկուցող՝ ԵՊՀ ԻՄ Տավուշ հետազոտական կենտրոնի ղեկավար **Հ.Ի. Մովսեսյան)**

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց:

Բաց քվեարկությամբ՝ 25 կողմ 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ **որոշվեց**

Որոշում՝

- Հաստատել նիստի օրակարգը։

<u>Օրակարգի առաջին</u> **՝** «ԵՊՀ ԻՄ-ում մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը հաստատելու մասին» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար Ա. Մակարյանի հաղորդումը: ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանը** նշեց, որ կարգը Մասնաճյուղի գիտխորհրդում ներկայացվելուց առաջ անցել է որոշակի փուլեր. ուղարկվել է համապատասխան ստորաբաժանումների ներկայացուցիչներին (Ուսումնամեթոդական վարչություն, հեռակա ուսուցման մագիստրատուրայի «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» կրթական ծրագրի համակարգող, Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժին, գիտական քարտուղար և իրավախորհրդատու), վերանայվել և համալրվել, ապա վերջնական տարբերակը ներկայացվել է ԵՊՀ ԻՄ-ի գիտխորհրդի հաստատմանը:

<u>Արտահայտվեցին</u> – Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Մ. Միքայելյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության

ամբորնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ Գ. Սիմոնյանը: Արտահայտվողները նշեցին, որ ներկայացված կարգը ամփոփ փաստաթուղթ է լավ մշակված, և առաջարկեցին նախագծի 6.1 և 6.2.5 կետերում կատարել որոշակի խմբագրումներ:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 50/1

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ԵՊՀ ԻՄ-ում հեռակա ուսուցման մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման կարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Օրակարգի երկրորդ՝ «2021-2022 ուստարվա ԵՊՀ ԻՄ ուսման վարձավճարների չափերի հաստատում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյանի** հաղորդումը:

Նա նշեց, որ ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդում քննարկելը հարցը քննարկվել է նաև տնօրենության նիստում, և հաշվի առնելով իրականությունը որոշեցին վարձավճարների չափերը թողնել անփոփոխ, չնայած այն հանգամանքին, որ Մասնաճյուղում այն բավականին ցածր է՝ տես հավելված 2-ում:

Արտահայտվեցին – Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ պրոֆեսոր Մ. Միքայելյանը, Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության

ամբորնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ Գ. Սիմոնյանը, Տուրիզմի և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, դոցենտ Գ. Հովհաննիսյանը և այլոք: Արտահայտվողները նշեցին, որ ճիշտ որոշում է կայացվել, հաշվի առնելով ներկա պահին ժողովրդի սոցիալ և բարոյահոգեբանական վիճակը

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 27 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին.***

Որոշում 51/2

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 16-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 16-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել 2021-2022 ուստարվա ԵՊՀ ԻՄ ուսման վարձավճարների չափերը համաձայն հավելված 2-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

Օրակարգի երրորդ ՝« ԵՊՀ ԻՄ ԳԱՑ-ի /2015-2020թթ/ վերաբերյալ հաղորդում» հարցի կապակցությամբ լսեցին ԵՊՀ ԻՄ-ի ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյանի** հաղորդումը.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների լրակազմի համալրումը և վերլուծական ուսումնասիրության նպատակը Մասնաճյուղի գործունեության արդյունավետության և կատարողականի գնահատումն է: ԳԱՑ-ում ներկայացվում են ԵՊՀ ԻՄ-ի գործունեության հիմնական ոլորտների առանցքային ցուցանիշները վերջին հինգ տարիների համար: Այդ ցուցանիշների վերլուծությունը հնարավորություն է տալիս վեր հանել Մասնաճյուղի ձեռքբերումները և թույլ կողմերը, նպաստում է նրա

որակի ինքնագնահատման կարողությունների հզորացմանը, և անհրաժեշտ է Մասնաճյուղի զարգացման ռազմավարական պլանավորման գործընթացի տարբեր փուլերի և քայլերի արդյունքները չափելու և վերլուծելու համար: Այն կոնկրետ, պարզ և հաշվարկելի չափիչ գործիք է:

Ներկայացվող ԳԱՑ-ը համալրվել և վերլուծվել է 2019-2020 ուստարվա ավարտին Մասնաճյուղի բոլոր կառույցների մասնակցությամբ և ներկայացնում են Մասնաճյուղի գործունեության գնահատման համալրված առանցքային ցուցանիշները 2015-2020 թվականների համար ըստ ԵՊՀ ԻՄ-ի գործունեության 6 հիմնական բնագավառների.

1. **Ընդունելության և համակազմի**, որի ներկայացման համար ներառված են գնահատման **15** ցուցանիշներ,
2. **Ուսումնական գործընթացի՝ 17** ցուցանիշներով,
3. **Ռեսուրսների և կառավարման՝ 15** ցուցանիշներով,
4. **Ենթակառուցվածքների՝ 10** ցուցանիշներով,
5. **Գիտության և նորարարության՝ 7** ցուցանիշներով,
6. **Արտաքին կապերի և միջազգային համագործակցության՝ 4** ցուցանիշներով:

Այսինքն, ԳԱՑ 2015-2020 լրակազմում **68 ցուցանիշների** միջոցով ներկայացված և վերլուծված են Մասնաճյուղի վերջին հինգ տարիների գործունեության արդյունքները:

Ստորև կներկայացվեն ցուցանիշներից առավել բովանդակային տեղեկատվություն պարունակող ցուցանիշները, դրանց համեմատական վերլուծությունը 5 տարիների կտրվածքով և դրանցից բխող հետևությունները: Մասնավորապես, ուշադրություն կդարձվեն այն ցուցանիշներին, որոնք հիմնավորում են Մասնաճյուղի կայուն և արդյունավետ գործունեությունը, և այն ցուցանիշներին, որոնք ահազանգում են մասնաճյուղում առկա խնդիրների մասին և պահանջում են համապատասխան գործընթացներ:

Առաջին բնագավառ՝ ընդունելություն և համակազմ, 15 ցուցանիշների համապարփակ վերլուծությունը: Հարկ է նշել, որ ընդունելությունն այն ոլորտն է, որտեղ մասնաճյուղն իրականացնում է տարիներով ձևավորված և մշտապես բարելավվող կայուն գործունեություն՝ ապահովելով դիմորդների կայուն հոսք: 2019/2020 ուստարվա դիմորդների թիվը՝ **336**, գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը (**237**): Ընդորում, պետք է նկատել, որ Մասնաճյուղի դիմորդների բաժնեմասն ընդհանուր դիմորդների համակազմում կայուն է և կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր թվում բոլոր տարիների համար կազմում է մոտ **2%**: Սա նշանակում է, որ Մասնաճյուղն ունի դիմորդների իր կայուն հոսքը: Մասնաճյուղի դիմորդների գերակշիռ մասը (2019-2020 ուստարում գրեթե **99%**-ը) Տավուշի մարզից են: Սա իհարկե խնդիր է, չնայած պետք է փաստել, որ այլ մարզերից դիմորդներ ներգրավելու համար Մասնաճյուղն իրականացնում է բավականաչափ գործընթացներ, մասնավորապես պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի ներկայացուցիչներն այցելում են նաև սահմանակից մարզեր՝ Լոռու և Գեղարքունիքի, ներկայացնում են Մասնաճյուղի գործունեությունն ու կրթական ծրագրերը: 2019-2020 ուստարում առկա ուսուցմամբ դիմորդների թիվն ավելացել է բոլոր կրթական ծրագրերով (բացի «Դիզայն» կրթական ծրագրով): Համեմատաբար շատ հոսք կատարվել է հումանիտար գիտությունների ֆակուլտետում. այն կազմել է դիմորդների ընդհանուր հոսքի **43%-**ը: Առկա ուսուցմամբ նախընտրելի են եղել հիմնականում «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա», «Ֆինանսներ (ըստ ոլորտի)», «Անգլերեն լեզու և գրականություն» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերը, իսկ հեռակա ուսուցմամբ՝ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն» և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրերը:

Կարևորվում է նաև ընդունվածների ցուցանիշը դիմորդների թվում՝ 2019 թվին առկա ուսուցման 220 դիմորդներից ընդունվել է 166-ը (**75.5%-**ը), որը

վատ ցուցանիշ չէ, իսկ հեռակա ուսուցման 116 դիմորդներից՝ 52-ը (**44.8%-**ը): Այս ցուցանիշը հեռակա ուսուցման համակարգի համար վերջին երկու տարիներին նվազել է, ինչը նշանակում է, որ դիմորդների մեծ մասը ընդունելության շեմը չեն հաղթահարել: Եվ ընդունելության արդյունքներով միասնական քննությունները չհաղթահարելու պատճառով թափուր է մնացել պետպատվերով հատկացված տեղերից 6-ը, իսկ վճարովի հիմունքներով 404 տեղերի մեծ մասը: Սա իհարկե իր ազդեցությունն է ունենում ուսանողական համակազմի վրա, բացի դրանից, իհարկե առաջ բերելով խնդիրներ նաև Մասնաճյուղի գործունեության այլ որոլորտներում: Առկա ուսուցման ուսանողների համակազմը գրեթե կայուն է (**550-650** ուսանող), իսկ հեռակա ուսուցման համակարգի ուսանողների թվաքանակը ընդունվողների թվաքանակի նվազմամբ պայմանավորված վերջին տարիներին բավականին նվազել է (2015 թվականի նկատմամբ **35%**-ով): 2019-2020 ուստարում, ի տարբերություն նախորդ ուստարիների, առկա ուսուցմամբ սովորողների թիվը մոտենում է ուսանողների ընդհանուր թվի կեսին: Ամեն դեպքում, կարևոր է, որ ժամանակակից աշխատաշուկայի պահանջներին համապատասխան երկրորդ մասնագիտություն, կամ բարձրագույն կրթություն ստանալու ցանկություն ունեցող դիմորդներ կան, որոնք ցանկանում են ուսումը համատեղել աշխատանքի հետ: Հեռակա ուսուցման համակարգի ուսանողների թվի նվազման պատճառով նվազել է նաև վճարովի համակարգում սովորողների ուսանողների հաշվեկշիռը. 2019-2020 ուստարվա համար այն կազմել է **87.4%:** Մասնաճյուղից ուսանողների արտահոսք գրեթե չկա, բայց այլ բուհերից վերջին 5 տարիներին բավականին թվով ուսանողներ են տեղափոխվել Մասնաճյուղ՝ 2019թ.-ին **27** ուսանող: Այդ թվակազմում մեծ թիվ են կազմում (2019թ.-ի համար **63%)** միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից՝ քոլեջներից մասնաճյուղ տեղափոխված ուսանողները: Այստեղ իր ազդեցությունն ունեն Մասնաճյուղի և մարզի քոլեջների միջև կնքված համագործակցության պայմանագրերը:

Երկրորդ բնագավառ։ Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման գրավականը Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմն է: Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմը (ներառյալ ԵՊՀ-ից հրավիրված դասախոսների) վերջին 5 տարիների համար կայուն է՝ **93-ից 97**: **Հիմնական պրոֆեսորադասախոսական** կազմում գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը վերջին 3 ուսումնական տարիներին աճել է և կազմում է պրոֆեսորադասախոսական կազմի **50-ից 55%-**ը, որը լավ ցուցանիշ է: Այն պայմանավորված է տեղացի երիտասարդ կադրերի գիտական ձեռքբերումներով և նաև մայր բուհից գիտական աստիճանով պրոֆեսորադասախոսական կազմի համալրմամբ: Ընդ որում, 2019-2020 ուստարում պրոֆեսորադասախոսական կազմի գրեթե **78%-ը** Մասնաճյուղում հիմնական աշխատողներ են, որոնց **41%**-ը գիտական աստիճանով է, և նրանցում մեծ թիվ են կազմում Մասնաճյուղի նախկին շրջանավարտները։

Ուսումնական գործընթացի համար կարևոր ցուցանիշներ են ուսանողական համակազմ, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմ հարաբերակցությունները: Վերջին 5 տարիների կտրվածքով ուսանող/պրոֆեսորադասախոսական հաստիքներ հարաբերակ-ցությունը կայուն է և կազմում է **19-20** միավոր՝ պայմանավորված ուսանողների թվի և պրոֆեսորադասախոսական հաստիքների թվի համամասնական փոփոխությամբ: Համաձայն Մասնաճյուղի 2016-2020թթ.զարգացման ռազմավարական ծրագրի վերջին 2 ուստարիներին մասնաճյուղում կատարվել է ուսումնաօժանդակ անձնակազմի օպտիմալացում՝ պայմանավորված նաև ուսանողների թվի նվազմամբ: Դրա արդյունքում ուսանող/ուսումնաօժանդակ կազմ հարաբերակցությունը մեծացել է։

Պրոֆեսորադասախոսական կազմի միջին տարեկան բեռնվածությունը համաձայն սահմանված նորմերի պետք է կազմի ոչ պակաս 700 ժամ: Վերջին տարիներին Մասնաճյուղի վարած կադրային քաղաքականության և

ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման արդյունքում այդ ցուցանիշը մոտենում է նորմատիվին: Ժամավճարային հիմունքներով պրոֆեսորադասախոսական կազմի ավելացել է, որոնք ներգրավվել են նեղ մասնագիտական դասընթացներ և հեռակա ուսուցման համակարգում դասավանդելու համար: 2019/2020 ուստարում մասնաճյուղում դասախոսների միջին տարեկան ուսումնական բեռնվածությունը կազմել է **724.3** ժամ: Հումանիտար և բնական գիտությունների ֆակուլտետում այն ցածր է եղել միջին ցուցանիշից, իսկ տնտեսագիտության և կիրառական արվեստի ֆակուլտետում բարձր:

Ինչպես ցույց են տալիս վերջին հինգ տարիների արդյունքները Մասնաճյուղում ուսանողների առաջադիմության միջին ցուցանիշները նվազել է, և 2019-2020 ուստարում կազմել է **67%,** այսինքն յուրաքանչյուր 3 ուսանողից 1-ը չի հաղթահարել քննաշրջանները: Դա հավանաբար, պայմանավորված է 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակում ուսումնական և քննական գործընթացների առցանց կազմակերպման առանձնահատկություններով: Այն առանձնապես իր ազդեցությունն է թողել որոշ կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման վրա, մասնավորապես բնական գիտությունների ֆակուլտետում: Իսկ ահա դասավանդման որակից և արդյունավետությունից ուսանողների բավարարվածության վերաբերյալ ուսանողական հարցման արդյունքները հիմնականում գոհացուցիչ են և վերջին տարիներին նույնիսկ բարձրացել են՝ միջինը, մոտավորապես, **4.7 միավոր**, ինչը վկայում է պրոֆեսորադասախոսական կազմի արդյունավետ և որակյալ աշխատանքի մասին: Իսկ ահա Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից հրատարակած ուսումնամեթոդական ձեռնարկների և դասագրքերի թիվը վերջին 3 տարիների համար փոքր թվեր են, որովհետև դրանց մեջ ներառված է միայն Մասնաճյուղի հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ցուցանիշը՝ առանց ԵՊՀ-ից հրավիրված պրոֆեսորադասախոսական կազմի:

Այս ցուցանիշը հույս ունենք կբարձրանա 2020-2021 ուստարում դասախոսների գիտական գործունեության խրախուսման համար մտցված լրավճարների և բացված «Տավուշ» հետազոտական կենտրոնի գործունեության շնորհիվ:

Երրորդ բնագավառ: Վերջին տարիներին Մասնաճյուղի եկամուտները վճարովի ուսուցման ծառայությունից առանձնապես չեն ավելացել, նույնիսկ 2019թ.-ին նվազել են և կազմել են տարեկան բյուջեի **39%-**ը, որը հիմնականում պայմանավորված է վճարովի ուսուցման համակարգում ուսանողների թվի նվազմամբ: Այլ եկամուտների մասով իրականացվում են բազմաբնույթ քայլեր, որի արդյունքում գրանցվել է եկամուտների աճ: 2019թ-ին Մասնաճյուղի տարեկան բյուջեն 2016թ.-ի համեմատ աճել է **23%**-ով, որի մեջ իր ազդեցությունն ունեն նախորդ տարվանից փոխանցված և ավելացած դրամական միջոցները և պետական բյուջեի աճը, որը 2019թ.-ին կազմել է Մասնաճյուղի տարեկան բյուջեի **17.2%-ը:** Պետք է նկատել, որ պետական բյուջեից եկամուտների հաշվեկշիռը տարեկան եկամուտներում վերջին 4 տարիներին աճել է: 2019թ.-ին մեկ ուսանողին ընկնող եկամուտների ծավալը նախորդ տարիների համեմատ ավելացել է և կազմել է **661** դրամ, որը պայմանավորված ուսանողների ընդհանուր թվի նվազմամբ և եկամուտների ծավալի ավելացմամբ: Ավելացել է նաև մեկ ուսանողին ընկնող ծախսերի ծավալը՝ 2019թ.-ին կազմել է **390** դրամ, ինչը կապված է իրականացված տեխնիկական վերազինման և գրականության ձեռքբերման ծախսերի հետ՝ լսարանները տեխնիկապես հագեցվել են և համակարգչային սրահները համալրվել, կատարվել է ուսումնական տարածքի վերանորոգում: 2019թ.-ին 2015թ.-ի համեմատ ուսումնական ծախսերն աճել են **15%**-ով: Տարեկան ընդհանուր ծախսերում ուսումնական ծախսերի հաշվեկշիռը վերջին 4 տարիների համար մեծացել է, սակայն այն համեմատաբար կայուն է և գտնվում է **48%-49,0%** միջակայքում: 2019թ.-ին մեկ ուսանողին ընկնող ուսումնական ծախսերը ավելացել են և կազմել են **190** դրամ, որը

պայմանավորված է ուսանողների թվի նվազմամբ, և կազմում են մեկ ուսանողին ընկնող ընդհանուր ծախսերի (**387.9** դրամ) կեսը։ 2019թ.-ին ուսումնաօժանդական ծախսերը 2015թ.-ի համեմատ աճել են **24.6%-**ով, իսկ նախորդ տարվա համեմատ աճել են գրեթե **2%**-ով։ Ընդհանուր տարեկան ծախսերում ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը 2016-2019 տարիների համար համեմատաբար կայուն է և կազմում է **11%-11,3%,** որը հիմնավորում է օպտիմալ ուսումնաօժանդակ անձնակազմի և անհրաժեշտ պայմանների առկայությունը։

Պրոֆեսորադասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը ՀՀ պաշտոնական միջինին 2015թ.-ից հետո նվազել էր, որը պայմանավորված է ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի միջին աշխատավարձի անփոփոխ, իսկ ՀՀ պաշտոնական միջին աշխատավարձի աճի տեմպերով: Այն 2018թ.-ին աճել է և մոտեցել է ՀՀ պաշտոնական միջինին։

Ծախսերի ընդհանուր ծավալում գերակշռում են աշխատանքի վարձատրության և եկամտային հարկի ծախսերը՝ **81%-90%,** (ինչը պայմանավորված է կազմակերպության գործունեության բնույթով, կազմակերպա-իրավական ձևով), ընդ որում՝ այդ ցուցանիշը վերջին տարիներին թեպետ քիչ, բայց աճել է, ինչը հիմնավորվում է հարկային համապատասխան օրենքների փոփոխություններով (եկամտային հարկի) և աշխատակիցների աշխատավարձերի բարձրացմամբ:

Չորրորդ բնագավառ։ Մասնաճյուղում մեկ ուսանողին ընկնող ընդհանուր և ուսումնական տարածքները առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների թվի նվազմամբ պայմանավորված ընդհանուր առմամբ ավելացել են։

2016-2017 թվականին լսարանային ֆոնդի աճը պայմանավորված է ակադեմիական խմբերի աճով: 2016-2017 ուսումնական տարում սկսել են

իրականացվել նոր կրթական ծրագրեր, ինչից ելնելով նաև ավելացվել են ակադեմիական խմբերը և ստեղծվել են նոր լսարաններ: 2017թ.-ից ակադեմիական խմբերը նվազել են ուսանողների քանակի նվազմամբ և որոշակի ակադեմիական խմբերի միավորումով պայմանավորված: Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը մեկից փոքր է, 2019թ.-ին կազմել է 0.78 միավոր, և պայմանավորված է առկա և հեռակա ուսուցման ընթացքում լսարանների համատեղմամբ (այսինքն երկհերթ ուսումնառության կազմակերպմամբ):

2019-2020 ուստարում մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվն աճել է՝ հիմնականում ուսանողների ընդհանուր թվի նվազման և նաև գրքերի թվի աճի պատճառով, 2019թ.-ին գրադարանում մեկ ուսանողին ընկնող գրքերի թիվը կազմել է **15.9** միավոր և վերջին տարիների համեմատ աճել է գրեթե 2 անգամ:

2019թ.-ին մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման ծախսը կազմել է **356** դրամ, որը նախորդ տարիների համեմատ միջին թիվ է: Պետք է նշել, որ 2017 թվականի դեկտեմբերից գործարկված Մասնաճյուղի էլեկտրոնային գրադարանն իր հերթին առաջարկում է մոտ 950 էլեկտրոնային նյութեր (հիմնականում դասագրքեր, մենագրություններ, ինչպես նաև գիտական ամսագրեր և այլն):

Մասնաճյուղի ֆինանսական ներդրումները գրականության և սարքավորումների ձեռքբերման համար, վերջին տարիներին այն նվազել է, ինչը պայմանավորված է մասնագիտական գրքերի բարձր գներով: 2016-2018թթ.սարքավորումների ձեռքբերման ծախսերը աճել են, պայմանավորված համակարգչային և այլ լաբորատորիաների ստեղծմամբ, արդիականացմամբ և վերազինմամբ: Իսկ 2019թ. սարքավորումների ձեռք բերման ծախսերը նվազել են և կազմել ընդամենը **1312000** դրամ, որը նախորդ տարվա համեմատ գրեթե 6 անգամ քիչ է: Վերջին երեք տարիներին նվազել են տարեկան էներգածախսը և ջրածախսը, դա պայմանավորված է ջեռուցման ավելի արդյունավետ

միջոցների կիրառմամբ, համակարգչային սրահների վերազինմամբ, նաև խնայողաբար օգտագործմամբ:

Հիգերորդ բնագավառ: Վերջին 3 տարիներին մեկ դասախոսին ընկնող գիտական հրատարակությունների թիվը կազմում է **0.85, 0.75 և 0.80,** իսկ 2019/20 ուստարում՝ **0.48,** և վերջին 4 ուստարիների համար գիտական հրատարակությունների վերաբերյալ բերված թվերը ներկայացնում են միայն Մասնաճյուղի հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի՝ առանց ԵՊՀ-ից հրավիրվածների, հրատարակությունների թիվը, դա նշանակում է, որ Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմն ավելի շատ ներգրավված է ուսումնական գործընթացում: Դասերով ծանրաբեռնվածությունը, ցածր աշխատավարձը, մոտիվացիայի պակասը, գործուղումների, գրեթե բացակայությունը և այլն: Նշենք, որ վերջին տարվա համեմատաբար փոքր ցուցանիշը պայմանավորված է նաև ՀՀ-ում տեղի ունեցող ներքաղաքական պատճառներով, covid19-ով, ինչպես նաև «Ակունք»-ի ԲՈԿ-ի ցանկից դուրս մնալով: Մասնաճյուղը քայլեր է ձեռնարկել դասախոսների գիտական գործունեության խրախուսման համար, որը հույս ունենք իր արդյունքները կտա և կարտահայտվի հաջորդ տարվա ցուցանիշում:

Վեցերորդ բնագավառ: Մասնաճյուղը բավականին գործընթացներ ունի իրականացնելու նաև արտաքին ու միջազգային կապերի և համագործակցությունների բնագավառում: Մասնաճյուղը հանրությանը տրամադրում է պարբերականներ, տարբեր տեղեկատվական հրատարակություններ, շահակիցներին ներկայացնում է իր կրթական ծրագրերը:

Համագործակցության շրջանակներում Մասնաճյուղը տարբեր կազմակերպությունների, դպրոցների և քոլեջների հետ կնքել է մանկավարժական, ուսումնական և արտադրական պրակտիկաների

կազմակերպման պայմանագրեր, իրականացվել են տարբեր ծրագրեր. միայն 2019 թ.-ին՝ 51:

Մասնաճյուղի 2015-2020թթ. գործունեության գնահատումը ըստ առանցքային ցուցանիշների ամբողջությամբ կարող եք տեսնել **հավելված 3-ում:**

<u>Արտահայտվեցին</u> **–** ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանը,** Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար **Գ. Հովհաննիսյանը**, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ **Մ. Միքայելյանը** և այլոք:

Ա. Մակարյանը նշեց, որ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել պրոֆեսորադասախոսական կազմ – ուսանողներ, վարչական կազմ – ուսանողներ, դասախոս – վարչական կազ հարաբերակցություններին, Մասնաճյուղը վարչական անձնակազմի վրա համեմատաբար շատ ռեսուրսներ է տրամադրում, քան սովորաբար ունենում են Բուհ-երը: **Ա. Մակարյանը** առաջարկեց առաջիակա գիտական խորհրդի նիստում ձևավորել հանձնաժողով կամ աշխատանքային խումբ, ով ծանոթ է մեր ռազմավարական ծրագրին, կմտածի Մասնաճյուղի ռազմավարական գործողությունների մասին և կներկայացնի առաջարկներ գործողությունների վերաբերյալ:

Առաջարկվեց նաև վերլուծությունն ուղարկել բոլոր ստորաբաժանումներին:

Որոշեցին.

Որոշում

Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի չորրորդ</u> **՝** « ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների իրականացումից և գնահատումից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների մասին» հարցի մասին լսեցին ՄԿՈԱ բաժնի վարիչ **Մ. Ճաղարյանի** հաղորդումը.

2020թ. մարտ-մայիս ամիսներին ԵՊՀ Իջևանի մասաճյուղում բոլոր գործող կրթական ծրագրերը վերանայվել են: Կրթական ծրագրերում առանձնացվել են մասնագիտական 5-ից 6 դասընթացներ, նրանք ամրագրվել են որպես հետազոտական բաղադրիչ պարունակող դասընթացներ: 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակում տարբեր կրթական ծրագրերով իրականացվել են հետազոտական աշխատանքներ: Նման կազմակերպմամբ և տրամաբանությամբ աշխատանքներ Մասնաճյուղում իրականացվել են առաջին անգամ, հետևաբար այդ աշխատանքների իրականացման ընթացքում և՛ ուսանողները, և՛ դասախոսները, հանդիպել են տարբեր խնդիրների: Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինն առաջին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո, մարտի սկզբին, հարցման միջոցով ուսումնասիրել է հետազոտական աշխատանքների կազմակերպումից և գնահատումից ուսանողների բավարարվածությունը:

Հարցաշարը ներառել է հարցեր, որոնց միջոցով նպատակ ենք ունեցել պարզելու ուսանողների բավարարվածությունը.

1. հետազոտական աշխատանքների բովանդակությունից և ռեսուրսներից,
2. հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքում ղեկավարի աջակցությունից,
3. կատարած աշխատանքից,
4. հետազոտական աշխատանքի կազմակերպումից,
5. հետազոտական աշխատանքի գնահատումից:

Հարցման օբյեկտիվության և ուսանողների անկաշկանդ մասնակցության նկատառումներով հարցումն իրականացվել է անանուն և առցանց եղանակով: Հարցմանը մասնակցել են 26 դասընթացների շրջանակներում հետազոտական աշխատանք իրականացրած 15 կուրսերի 150 ուսանողներից **80-ը (53%)**, որը մասնակցության շատ ցածր ցուցանիշ է: Հարցմանը մասնակցած ուսանողների **54%-ի** կարծիքով հետազոտական աշխատանքը ուսանողների մոտ հետազոտելու, ստեղծագործելու, մտածելու և արտահայտվելու կարողությունները զարգացնելու միջոց է, **44%-ի** կարծիքով այն տվյալների հավաքագրման և դրանց վերլուծման կարողությունները զարգացնելու միջոց է, **8%-ը** հետազոտական աշխատանքը բնութագրել է որպես ինքնուրույն աշխատանք, իսկ **4%-ը** այն համարում է կուրսային աշխատանք: Ընդհանուր առմամբ, գրեթե բոլոր կարծիքներն արտահայտում են հետազոտական աշխատանքի գաղափարական կողմը: Այսինքն, ըստ ուսանողների, իրականացվող հետազոտական աշխատանքները նպատակ ունեն ուսանողների մոտ զարգացնելու թեման խորությամբ ուսումնասիրելու, անհրաժեշտ տվյալներ դուրս բերելու, դրանք համեմատելու և գնահատելու, սեփական եզրակացություն մշակելու և ներկայացնելու կարողությունները:

Ըստ հարցման արդյունքների.

- ✓ ուսանողների **97.5%-ը** կատարել և ներկայացրել է իր հետազոտական աշխատանքը:
- ✓ ուսանողների **71%-ը** (55 ուսանող) փաստել է, որ մասնակցել է հետազոտական աշխատանքի թեմաների առաջադրմանը՝ արտահայտելով իր ցանկությունները:
- ✓ ուսանողների **22%**-ը փաստում է, որ հետազոտական աշխատանքի թեման իր նախասիրությունների շրջանակում էր,
- ✓ իսկ **48%**-ն այն համարել է ուղղակի հետաքրքիր թեմա,
- ✓ իսկ ահա **9%-**ը (ընդամենը 7 ուսանող) իր թեման համարել է անհետաքրքիր, ինչը կարող է կախված լինել թեմայից անտեղյակության, թեմայի բարդության կամ ոչ արդիականության հետ և այլն:

Համադրելով հետազոտական աշխատանքի վերաբերյալ ուսանողների ձևակերպումները և կատարած աշխատանքի բնույթի վերաբերյալ կարծիքները կարելի է եզրակացնել, որ դրանք համընկնում են: Մասնավորապես, նրանց գրեթե **58,4%-ի** կարծիքով իրականացված աշխատանքը ամբողջությամբ հետազոտական էր, իսկ **31,2%-**ի կարծիքով աշխատանքն ավելի շուտ ինքնուրույն աշխատանք էր: Իսկ ահա մասնակիցների մոտ 10%-ը դժվարացել է ներկայացնել իր աշխատանքի բնույթը: Ուսանողների պատասխաններից հետևում է, որ թեմաները հիմնականում եղել են մատչելի և հասանելի, մասնավորապես նրանց **60%-**ի մոտ հետազոտական աշխատանքի կատարումը բարդություն չի ներկայացրել, **28%-ը** նշել է, որ ստիպված է եղել շատ նոր բաներ սովորել, ինչը հետազոտական աշխատանքի կարևոր նպատակներից մեկն է, և թեմաների ճիշտ ընտրման և ուսանողների հետ դասախոսների արդյունավետ գործունեության արդյունքում պետք է հասնել այս ցուցանիշի բարելավմանը: Ուսանողներից **5%-ի** մոտ եղել են դժվարություններ, սակայն, ինչպես իրենք են փաստել, կարողացել են հաղթահարել և գերազանց կատարել աշխատանքը: Ընդհանուր առմամբ աշխատանքը լավ է ստացվել մոտ **93%**-ի մոտ:

Ոսումնասիրելով հետազոտական աշխատանքների կատարման արդյունքում իրենց ձեռքբերումների վերաբերյալ ուսանողների կարծիքները, կարելի է համարել, որ մասնաճյուղը կատարել է իր առջև դրված խնդիրը՝ հասնելով անհրաժեշտ արդյունքի: Հարցմանը մասնակցած ուսանողների **55-ից 70%-ը** նշել է, որ հետազոտական աշխատանքն իրենց տվել է ինքնուրույն աշխատելու ունակություններ, դատողություններ, եզրակացություններ և վերլուծություններ կատարելու կարողություններ, նոր գիտելիքներ և այլն: Ուսանողների **56%**-ը նշել է, որ հնարավորության դեպքում կցանկանար շարունակել աշխատել իր թեմայի ուղղությամբ:

Ուսանողի հաջողության առաջնահերթ գրավականներից են նրա ինքնակրթությունը և դասախոսների հետ հաջող համագործակցությունը։

ՄԿՈԱ բաժինը, ուսումնասիրության շրջանակներում փորձել է պարզել, թե ուսանողները որքանով են բավարարված աշխատանքի ղեկավարի աջակցությունից.

1. թեմայի ընտրության գործում,
2. հետազոտական մեթոդների ընտրության գործում,
3. վերլուծությունների կատարման ժամանակ,
4. գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում,
5. աշխատանքի արդյունքների ձևակերպման ժամանակ:

Ուսանողներն առաջադրված այդ հարցերին պատասխանել են իրենց բավարարվածությունը գնահատելով 5 միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր նիշն է, 2-ը՝ ամենացածր, իսկ 0-ն՝ դժվարանում են պատասխանել։ Հավաքագրված տվյալների վերլուծության արդյունքում վերը նշված գործընթացների համար դասախոսների կողմից ուսանողներին աջակցության միջին միավորները կազմել են **3.7-3.9** միավոր։ Համեմատական կարգով աջակցությունը բարձր է գնահատվել ղեկավարների կողմից։ Ինչը առավելապես կարող է լինել ղեկավարի կողմից պահանջվող աշխատանքի վերաբերյալ ուսանողների ոչ ճիշտ պատկերացումը։

Ցանկացած պարագայում այս գործընթացում նկատվել են հետևյալ խնդիրները.

- ✓ ղեկավարների կողմից ոչ անհրաժեշտ չափով աջակցություն,
- ✓ ուսանողներին աշխատանքի իրականացման ճանապարհի ոչ ճիշտ ներկայացում:

Հարցման 3-րդ բաժնի հարցերով նպատակ ենք ունեցել պարզելու ուսանողների **բավարարվածությունն իրենց կատարած աշխատանքից**։

Գնահատման 5 միավորանոց սանդղակով փորձել ենք պարզել, թե որքանո՞վ է ուսանողների մոտ ստացվել ինքուրույն.

1. պլանավորել հետազոտական աշխատանքի իրականացման ընթացքը,
2. ձևակերպել աշխատանքի նպատակն ու խնդիրները,
3. գնահատել թեմայի արդիականությունը և նշանակությունը,
4. հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը,
5. օգտվել անհրաժեշտ գրականությունից,
6. ներկայացնել ձեռք բերված արդյունքները,
7. ձևակերպել եզրակացությունը,
8. ներկայացնել կատարած աշխատանքը։

Նշենք, որ ըստ նշված հարցերի Մասնաճյուղում հարցմանը մասնակցած ուսանողների կողմից տրված գնահատականների միջինը կազմել է **3.9-4.1** միավոր, որը նույնպես բարձր արդյունք չէ։ Այս դեպքում ուսանողների աշխատանքը համեմատաբար ցածր է գնահատվել ղեկավարների կողմից, ինչը կրկին փաստում է, ուսանողների ոչ լիարժեք պատկերացումը աշխատանքի բնույթից։ Այս գնահատականների ռեալ բովանդակությունն ավելի ընկալելի և խնդիրներն ավելի տեսանելի կլինեն ըստ ֆակուլտետների դիտարկման արդյունքում։

Ստորև ներկայացնում ենք բոլոր ֆակուլտետների ամփոփ արդյունքները։ Հետազոտական բաղադրիչով դասընթացների գաղափարի նորամուծությունը նոր խնդիրներ է առաջադրել ոչ միայն ուսանողների համար, նաև ուսումնական գործընթացի կազմակերպիչների համար։ Նրանք պետք է ապահովեն անհրաժեշտ պայմաններ ու միջավայր ուսանողների հետազոտական գործունեության արդյունավետ և հարթ կազմակերպման համար։ Այդ գործընթացում ցանկացած թերություն և բարդ իրավիճակ, ակնհայտ է, կարող է նվազեցնել ուսանողի մոտիվացիան։ Այդ պատճառով բոլոր պատասխանատուներն աշխատել են նվիրումով և կազմակերպել ու

աջակցել են ուսանողներին: Ներկայացված արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ հետազոտական աշխատանքի կատարման համար տրամադրված ժամանակահատվածից առավել բավարարված են ուսանողները, քան ղեկավարները: Կարելի է եզրակացնել, որ ղեկավարներն ունեցել են ավելի մեծ պլաններ և ակնկալիքներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Մասնաճյուղի դասախոսները հետազոտական աշխատանքների կատարման համար գերադասել են ուսանողների անհատական աշխատելու սկզբունքը: Հարցմանը մասնակցած ուսանողների **86%-**ը իր հետազոտական աշխատանքը կատարել է անհատապես, **14%**-ը՝ խմբային և անհատական աշխատանքների զուգակցումով, իսկ **6%**-ը՝ միայն խմբային աշխատանքով: Հարկ է նշել, որ ուսանողների **85%**-ի համար աշխատանքի կազմակերպման ընտրված ձևը եղել է արդյունավետ: Իսկ ահա հարցման մասնակիցների **77%**-ը փաստել է, որ իրենց ծանոթացրել են հետազոտություն կատարելու մեթոդաբանությանը, իսկ 4%-ը նշել է, որ իրենց այն չի ներկայացվել:

Ուսանողի համար ցանկացած աշխատանքի ավարտը ամրագրվում է գնահատականով, որն արտահայտում է կոնկրետ նպատակի հասնելու համար նրա թափած ջանքերն ու ձեռքբերումները: Նշենք, որ հարցման մասնակիցների գերակշիռ՝ **79%**-ը վկայել է, որ գնահատման չափանիշների մասին տեղեկացել է անմիջապես դասախոսից: Ուսանողների **17 %**-ը գնահատման չափանիշներից տեղեկացել է այլ ճանապարհներով, իսկ **4%**-ը առհասարակ տեղեկացված չի եղել: Սա իհարկե կարելի է բացատրել ոչ միայն դասախոսի թերացմամբ, այլ նաև ուսանողների անտարբերությամբ: Ուսանողների **54%**-ի կարծիքով գնահատման չափանիշները ճիշտ են ընտրված, **41%**-ի կարծիքով՝ մասամբ են ճիշտ: Չնայած, որ ըստ հարցման արդյունքների ուսանողների ճնշող մեծամասնությունը՝ **84%-ը**, բավարարված է իր ստացած գնահատականից, սակայն **12%-ի** կարծիքով իր ստացած

գնահատականը չի համապատասխանում կատարված աշխատանքին: Բացի երկկողմ սուբյեկտիվության առկայությունից նման կարծիքի համար պատճառ կարող է հանդիսանալ նաև ուսանողների ոչ լիարժեք տեղեկացվածությունը գնահատման չափանիշներից: Աշխատանքի ղեկավարների **56%-ի համար ,** գնահատման չափանիշները արդյունավետ են եղել մասամբ: Այնուամենայնիվ դասախոսները վկայել են, որ գնահատականները եղել են աշխատանքին համապատասխան, նույնիսկ դեասախոսների **44% -ը** նշել է, որ գնահատականները բարձր է նշանակվել, խրախուսման նպատակով: Աշխատանքների գնահատումն իրականացվել է ըստ ամրագրված չափանիշների: Դրանցում կարևորվում են ուսանողի ինքնուրույնությունը, ներկայացրած վերլուծությունները, արդյունքների հիմնավորվածությունը, տվյալների մշակումը և այլն:

Փորձել ենք պարզել, թե ըստ ուսանողների իրենց աշխատանքում հատկապես ի՞նչ է բարձր գնահատվել: Արդյունքներից կարելի է եզրակացնել, որ ուսանողների կողմից ներկայացվել են բավականին լավ կատարված աշխատանքներ, և հարցմանը մասնակցած ուսանողների **50-ից 60%-**ը վկայել է, որ իր աշխատանքը գնահատելուց հաշվի են առնվել բոլոր հիմնական տեսանկյունները: Արդյունքները հիմնականում համընկնում են աշխատանքի ղեկավարների կողմից նշված արդյունքներին:

Հետազոտական աշխատանքների բարելավման նպատակով ուսանողների կողմից հնչեցված հիմնական առաջարկներն են.

1. հնարավորինս նվազեցնել մեկ կիսամյակում հետազոտական աշխատանքների քանակը՝ որակի ապահովման համար,
2. հանձնարարել առավել արդիական թեմաներ,
3. վերանայել գնահատման չափանիշները և դրանք լիարժեք կիրառել գնահատման ժամանակ,
4. աշխատանքների գնահատմանը մասնակից դարձնել մի քանի դասախոսների,

5. ներառել ավելի շատ գործնական աշխատանքներ:

Դասախոսների կողմից ներկայացված առաջարկներն են.

1. Հետազոտական աշխատանք իրականացնել առաջին կուրսից, տարբերակելով աշխատանքի պահանջները:
2. Իրականացնել հետազոտական աշխատանքի նախապատրաստական դասընթացներ:
3. Աշխատանքը իրականացնել տվյալ առարկայի ծրագրի ավարտից հետո:
4. Վերադառնալ կուրսային աշխատանքին:
5. Հետազոտական աշխատանքի համար տրամադրել առանձին դասընթաց, առանձին կրեդիտով:

Հետազոտական աշխատանքի կատարման ընթացքում ուսանողների մոտ առաջացած խնդիրները հիմնականում կապված են

- ✓ Համավարակի սահմանափակումների հետ /դաս.,ուս./:
- ✓ Անհրաժեշտ գրականության պակասի հետ/ուս./
- ✓ Ծանրաբեռնվածությամբ՝ մեկ կուրսում մի քանի աշխատանք/դաս., ուս./:
- ✓ Փորձի պակասի հետ/դաս./

Հետազոտության ընթացքում ի հայտ եկած հիմնական խնդիրներն են.

- ✓ Ուսանողները լիարժեք պատկերացում չունեն իրենց կողմից և ղեկավարի կողմից պահանջվող գործառույթների վերաբերյալ:
- ✓ Ուսանողների ոչ լիարժեք պատկերացումը հետազոտական աշխատանքի կազմակերպման մեթոդաբանությունից:
- ✓ Ուսանողների ոչ լիարժեք պատկերացումը գնահատման չափանիշներից:

Հարցման արդյունքները կտրամադրվեն.

- ✓ Ամբիոններ,
- ✓ Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժին,
- ✓ Հետազոտական աշխատանքների ղեկավարներին,

- ✓ Հետազոտական աշխատանք իրականացնող ուսանողներին,
- ✓ Կիրապարակվի Մասնաճյուղի կայքէջում:

<u>Արտահայտվեցին</u> – ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա. Մակարյանը**:

Նա առաջարկեց վերլուծությունը ուղարկել ամբիոններ:

Որոշեցին.

Որոշում

- ➢ Ընդունել ի գիտություն:

<u>Օրակարգի հինգերորդ</u> **՝** «Հաղորդում ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի կատարման ընթացքի մասին (2019-2020 ուստարի)›› հարցի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժնի վարիչ **Ն. Գրիգորյանի** հաղորդումը.

2019-2020 ուստարվա ընթացքում ԵՊՀ ԻՄ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրով իրականացվել են հետևյալ վերապատրաստումները.

1. 2019թ. սեպտեմբեր ամսին շարունակվել են իրականացվել «Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ» մոդուլի «Աշխատանք վիրտուալ կրթական միջավայրում» /Moodle/ 10 ակադեմիական ժամ տևողությամբ դասընթացը, որի աշխատանքներն ընդհատվել էին 2019թ. հունիս ամսին՝ տեխնիկական պատճառներով:

Դասընթացին մասնակցել է թվով **14** դասախոս. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ- **7 դասախոս**, Տնտեսագիտության ֆակուլտետ- **5 դասախոս,** Բնական գիտությունների ֆակուլտետ- **2 դասախոս:**

Դասընթացի ավարտին նախատեսված ստուգարքը հանձնել են **13** դասախոս. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ- **7 դասախոս,** Տնտեսագիտության ֆակուլտետ - **4 դասախոս,** Բնական գիտությունների ֆակուլտետ - **2 դասախոս:**

2019-2020 ուստարում Մասնաճյուղում սկսել են իրականացվել «ERASMUS+ PRINTeL» նախագծի շրջանակներում իրականացվող «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլի դասընթացները:

2. 2019թ. հոկտեմբերի 10-ին, 22-ին և նոյեմբերի 5-ին, 12-ին մասնաճյուղում անց է կացվել «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլում ներառված «Ակտիվ ուսուցում. շրջված դասարանում» 10 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրատման դասընթացը, որը վարել է ԵՊՀ Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի ասիստենտ, կրթության փորձագետ Սերոբ Խաչատրյանը: Դասընթացին մասնակցել է թվով **29** դասախոս. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ- **17 դասախոս,** Տնտեսագիտության ֆակուլտետ- **4 դասախոս,** Բնական գիտությունների ֆակուլտետ- **4 դասախոս,** Կիրառական արվեստի ֆակուլտետ - **4 դասախոս:**

Դասընթացի ավարտին նախատեսված ստուգարքը հանձնել են 18 դասախոս. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ- **9 դասախոս,** Տնտեսագիտության ֆակուլտետ- **4 դասախոս,** Բնական գիտությունների ֆակուլտետ- **4 դասախոս,** Կիրառական արվեստի ֆակուլտետ - **1 դասախոս:**

3. 2020թ. հունվար-հուլիս ամիսներին իրականացվել է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի կրթական կառուցամասի «Անգլերենը ակադեմիական միջավայրում» 60 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստման դասընթացը, որին մասնակցել է թվով 12 դասախոս. Հումանիտար գիտությունների

ֆակուլտետ- **6 դասախոս,** Տնտեսագիտության ֆակուլտետ - **1 դասախոս,** Բնական գիտությունների ֆակուլտետ- **4 դասախոս,** Կիրառական արվեստի ֆակուլտետ- **1 դասախոս:**

Դասընթացի ավարտին անցկացված քննությունը հաղթահարել են 3 դասախոսներ. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ- **2 դասախոս,** Կիրառական արվեստի ֆակուլտետ- **1 դասախոս:**

4. 2020թ. հունվարի 29-ից 31-ը կազմակերպվել է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլում ներառված 12 ակադեմիական ժամ տևողությամբ՝ «Համակցված դասավանդում և ուսուցում» դասընթացը, որը վարել է ԵՊՀ Քիմիայի ֆակուլտետի՝ Ֆիզիկական և կոլոիդների քիմիայի ամբիոնի դոցենտ Լիանա Գաբրիելյանը:

Դասընթացին մասնակցել են թվով **36** դասախոսներ. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ- **22 դասախոս,** Տնտեսագիտության ֆակուլտետ- **4 դասախոս,** Բնական գիտությունների ֆակուլտետ- **7 դասախոս**, Կիրառական արվեստի ֆակուլտետ- **3 դասախոս**:

Դասընթացի ավարտին անցկացված ստուգարքը հանձնել են 32 դասախոս, որից՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետ- **19 դասախոս,** Տնտեսագիտության ֆակուլտետ- **4 դասախոս,** Բնական գիտությունների ֆակուլտետ- **6 դասախոս,** Կիրառական արվեստի ֆակուլտետ- **3 դասախոս**:

5. 2020թ. փետրվարի 20-ից մայիսի 30-ը անց է կացվել 64 ակադեմիական ժամ տևողությամբ վերապատրաստման դասընթաց՝ Edunext կրթական պլատֆորմում դասընթացների տեղադրումը իրականացնելու նպատակով, որին մասնակցել են ԵՊՀ ԻՄ-ի 4 աշխատակիցներ: Դասընթացի ընթացքում Edunext կրթական պլատֆորմ են ներմուծվել «Մակրոտնտեսագիտություն» և «Մաթեմատիկական անալիզ»

դասընթացները (տնային առաջադրանքներ, տեսանյութեր, առաջադրանքներ՝ միջանկյալ քննությունների ֆորմատով):

6. Մայիսի 2-5-ը և մայիսի 14-16-ը կազմակերպվել է 10 ակադեմիական ժամ տևողությամբ «Ինչպես օգտագործել Google forms ձևաչափի հնարավորությունները առցանց քննությունների համար» առցանց դասընթացը՝ 2 փուլով (հիմնական և համատեղությամբ աշխատող դասախոսների համար): Դասընթացի 2 փուլերին մասնակցել են **4** աշխատակից և **48** դասախոս. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ- **26 դասախոս,** Տնտեսագիտության ֆակուլտետ- **9 դասախոս,** Բնական գիտությունների ֆակուլտետ- **11 դասախոս,** Կիրառական արվեստի ֆակուլտետ- **2 դասախոս**:

Դասընթացներն ավարտվել են ստուգարքով, որը հաղթահարել են **3** աշխատակից և **35** դասախոս. Հումանիտար գիտությունների ֆակուլտետ - **18 դասախոս,** Տնտեսագիտության ֆակուլտետ- **7 դասախոս,** Բնական գիտությունների ֆակուլտետ- **9 դասախոս**, Կիրառական արվեստի ֆակուլտետ- **1 դասախոս:**

7. 2020թ. հուլիսի 2-15-ը կազմակերպվել է պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի «Ուսուցման նորարարական մեթոդներ» մոդուլում ներառված 12 ակադեմիական ժամ տևողությամբ «Ակտիվ ուսուցում և թվային տեխնոլոգիաները դասավանդման գործընթացում՝ մոբայլ ուսումնառություն և խաղայնացում» դասընթացը, որը վարել է ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի՝ Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դոցենտ Սիլվա Պետրոսյանը:

Դասընթացին մասնակցել են **33 դասախոսներ.** Հումանիտար գիտությունների ֆակուլտետ- **21 դասախոս,** Տնտեսագիտության

ֆակուլտետ- **5 դասախոս,** Բնական գիտությունների ֆակուլտետ- **5 դասախոս,** Կիրառական արվեստի ֆակուլտետ- **2 դասախոս**:

Դասընթացի ավարտին անցկացված ստուգարքը հանձնել են **13 դասախոս,** որից՝ Հումանիտար գիտությունների ֆակուլտետ- **6 դասախոս**, Տնտեսագիտության ֆակուլտետ- **4 դասախոս**, Բնական գիտությունների ֆակուլտետ- **2 դասախոս**, Կիրառական արվեստի ֆակուլտետ- **1 դասախոս**:

<u>Արտահայտվեցին</u> **–** ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանը,** Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Լ. Հարություն**, **Լ. Բեգինյանը** և այլոք:

Մասնավորապես Լ. Հարությունյանը շեշտեց, որ կարելի էր կազմակերպել առավել հետաքրքիր դասընթացներ ավելի շատ դասախոսների ընդգրկելու համար, Լ. Բեգինայնը շնորհակալություն հայտնեց բաժնին կատարած աշխատանքների համար, իսկ Ա.Մակարյանը նշեց, որ նախատեսվում է իրականացնել նաև վարչական աշխատողների վերապատրաստումներ:

Որոշեցին.

Որոշում

- Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ ԵՊՀ ԻՄ-ում հայտարարված ներմասնաճյուղային դրամաշնորհային մրցույթի ընթացքի մասին լսեցին ԵՊՀ ԻՄ Տավուշ հետազոտական կենտրոնի ղեկավար **Հ.Ի. Մովսեսյանի** հաղորդումը.

2021 թ. մարտի 10-ին տեղի ունեցել հայտերի բացման նիստը, որի առաջին՝ բաց մասում հանձնաժողովին ներկայացվեցին մրցույթի հայտերը, և

հանձնաժողովը որոշում կայացրեց յուրաքանչյուր հայտի ընդունման կամ մերժման վերաբերյալ։ Հանձնաժողովի որոշմամբ՝ ընդունվեցին բոլոր վեց հայտերը։ Նիստի երկրորդ՝ փակ մասում հանձնաժողովը յուրաքանչյուր հայտի համար հաստատեց երկու փորձագետի։ Այնուհետև հայտերը՝ գնահատման թերթիկների հետ միասին, ուղարկվեցին փորձագետներին։ Հաստատված փորձագետները Երևանի պետական համալսարանից էին, Ագրարային համալսարանից, Եվրոպական համալսարանից, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնից, «Հիդրոօթերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ից։

Մարտի 30-ին տեղի ունեցավ մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստը, որի ընթացքում ամփոփվել են մրցույթի արդյունքները և որոշվել՝ որ հայտին կարող է տրամադրվել դրամաշնորհ և որին՝ ոչ։ Առավելագույն միավորներ հավաքած հայտերից երկուսում՝ «**Լուսահովիտ համայնքի գյուղական զբոսաշրջության զարգացման նախագծի մշակում**», «**Գյուղական զբոսաշրջության զարգացումը որպես Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման գործոն**», նախագծի կատարողներ են հանդիսանում միևնույն անձինք, և նպատակահարմար չէ միաժամանակ ֆինանսավորել տվյալ երկու հայտերը, քանի որ այդ դեպքում մյուս՝ առավելագույն միավորներ հավաքած հայտերը, որոնցում կատարողները տարբեր անձինք են, և թեմաները վերաբերում են այլ ոլորտների, դուրս են մնում մրցույթից՝ ելնելով բյուջեով նախատեսված ֆինանսավորման ծավալներից։ Այս առումով, արտահայտվողները նշեցին, որ դրամաշնորհ կարող է տրամադրվել տվյալ երկու հայտերից ամենաբարձր միավորներ հավաքածին, այն է՝ «**Լուսահովիտ համայնքի գյուղական զբոսաշրջության զարգացման նախագծի մշակում**»։ Նրանք նշեցին նաև, որ դրամաշնորհ կարող է տրամադրվել «**Մեփականության իրավունքի հատկորոշվածության խնդիրները կորպորատիվ կառավարման համակարգում (Տավուշի մարզի կազմակերպությունների օրինակով)**» և «**Տավուշի մարզում**

պարարտանյութերի օգտագործման հիմնախնդիրները, այդ թվում քիմիական պարարտանյութերի վաճառակետերի անհամաչափ տեղաբաշխումը և դրանց կարգավորման ուղիները» վերնագրով նախագծերին՝ այսպիսի որոշումը թույլ կտա ընդլայնել ոլորտային շրջանակը՝ միաժամանակ նախագծի աշխատանքներում ներգրավելով առավել մեծ թվով կատարողների:

Այսպիսով հանձնաժողովը առաջարկում է.

«Նոր մշակաբույսերի ներդրման ուղղությունները Տավուշի մարզում» վերնագրով հայտին տրամադրվի 400.000 դրամի չափով դրամաշնորհ: «Լուսահովիտ համայնքի գյուղական զբոսաշրջության զարգացման նախագծի մշակում», «Սեփականության իրավունքի հատկորոշվածության խնդիրները կորպորատիվ կառավարման համակարգում (Տավուշի մարզի կազմակերպությունների օրինակով)», «Տավուշի մարզում պարարտանյութերի օգտագործման հիմնախնդիրները, այդ թվում քիմիական պարարտանյութերի վաճառակետերի անհամաչափ տեղաբաշխումը և դրանց կարգավորման ուղիները» վերնագրով հայտերից յուրաքանչյուրին՝ 500.000 դրամի չափով:

Նրանք նշեցին, որ սա հնարավորություն կտա ֆինանսավորել առավել մեծ թվով հայտերի:

Արտահայտվեցին **–** ԵՊՀ ԻՄ տնօրենի պաշտոնակատար **Ա.Մակարյանը,** Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար **Գ. Հովհաննիսյանը**, Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի վարիչ **Մ. Միքայելյանը,** Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Սիմոնյանը և այլոք: Արտահայտվողները առաջարկեցին հաստատել հանձնաժողովի որոշումը և հաստատել ներկայացված նախագծերը համապատասխան դրամային չափերով և կնքել պայմանագրեր ղեկավարների հետ:

Բաց քվեարկությամբ, միաձայն՝ 26 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ, ***որոշեցին***

Որոշում 51/3

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի Մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 6-րդ, 12-րդ և 16-րդ ենթակետերով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 6-րդ, 12-րդ և 16-րդ ենթակետերով, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում գիտական դրամաշնորհների տրամադրման կարգի /հաստատված 2020թ. դեկտեմբերի 25-ի նիստի թիվ 48/5 որոշմամբ/ 2.2, 5.15 կետերով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Երաշխավորել ֆինանսավորման ներկայացված թեմաները համաձայն հավելված 4-ի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրամանագրման պահից:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ_____Մ. Ս. ԱԹՈՅԱՆ